# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի <<Վաղարշապատի հիվանդանոց>> ՓԲԸ-ն հայտարարում է բաց մրցույթ հետևյալ թափուր պաշտոնը համալրելու համար վիրաբուժական բաժանմունքում բժիշկ-վիրաբույժ 0.75 դրույք:

ՀՀ Կառավարության 2011թ հունիսի 10-ի թիվ22 արձանագրային որոշման պահանջներին բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ, ով կբավարարի ներքոնշյալ պայմաններին`

ա) բարձրագույն բժշկական և հետբուհական կրթության առկայություն համապատասխան մասնագիտությամբ

բ) բժշկական էթիկայի կանոնների իմացություն

1. լրացուցիչ պայմաններ`

ա) համակարգչով աշխատելու իմացություն

բ) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն

գ) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող ՀՀ-ն քաղաքացի, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացի, ով ունի կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչված են ՀՀ կողմից:

Թափուր տեղի հավակնորդների կողմից ներկայացվում է`

1. դիմում(լրացվում է տեղում)
2. մեկ լուսանկար 3×4 չափի
3. քաղվածք աշխատանքային գրքույկից(աշխատանքային ստաժ ունենալու դեպքում)
4. ինքնակենսագրություն
5. անձնագրի, բարձրագույն բժշկական և հետբուհական(ում բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու ժամանակահատվածում օրենսդրությամբ սահմանվել է հետբուհական կրթության պահանջ(ինտերնատուրա, կլինիկական օրդինատուրա)) մասնագիտական կրթության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթուղթ ի(դիպլոմի), վերապատրաստման վկայականների(դրա առկայության դեպքում) պատճենները և բնօրինակները,
6. արական սեռի անձինք` նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասի կցագրման վկայականի պատճեն
7. նախորդ աշխատավայրից բնութագիր(եթե այդպիսիք առկա են)
8. օտարերկրյա քաղաքացիները` ՀՀ-ում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը ներկայացնում այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը:

Փաստաթղթերը ընդունվում են <<Վաղարշապատի հիվանդանոց>> ՓԲԸ-ում 25.10.2018թ-ից ամեն օր ժ. $10^{00}$-$15^{00}$, բացի շաբաթ և կիրակի օրերից: ( ՀՀ Արմավիրի մարզ, քաղաք Էջմիածին Սպանդարյան 1, հեռախոս 5-57-20), մինչև նոյեմբերի 8-ը ներառյալ:

Մրցույթը տեղի կունենա <<Վաղարշապատի հիվանդանոց>> ՓԲԸ-ում 23.11.2018թ ժ. 12:00-ին:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել <<Վաղարշապատի հիվանդանոց>> ՓԲԸ-ի աշխատանքային խմբին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: